ԵԴ2/27772/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 հունվարի 2024թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով Ա/Ձ Արմեն Հովհաննիսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

28.08.2023 թվականին Ա/Ձ Արմեն Հովհաննիսյանի ներկայացուցիչ Լևոն Օհանյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի՝ Ա/Ձ Արմեն Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանը, նախագահությամբ դատավոր Ա. Օհանյանի, 05.09.2023 թվականին որոշում է ընդունել հայցադիմումը վերադարձնելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը և կից փաստաթղթերը ստացել է 20.12.2023 թվականին և 25.12.2023 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի և Ա/Ձ Արմեն Հովհաննիսյանի միջև 01.10.2020 թվականին կնքված թիվ ԾՔ-ՀԲՄԱԾՁԲ-20/12/01 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը, 26.12.2023 թվականին մակագրվել է դատավոր Ս. Ուլիխանյանին, և դատավորին է հանձնվել 29.12.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի

պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Ա/Ձ Արմեն Հովհաննիսյանի ներկայացուցչի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականին փետրվարի 16-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ